ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2019 թ. հունիսի 4-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 3ա դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին 25 ծնող, դասվար Աննա Հարությունյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ՝ Զոյա Գևորգյանը:

Օրակարգում՝

1. Աշակերտների տարեվերջյան առաջադիմության արդյունքների ամփոփումը:
2. Էքսկուրսիայի կազմակերպումը:

1. Լսեցին.- *Աշակերտների տարեվերջյան առաջադիմության արդյունքների ամփոփման հարցը:*

Ելույթ ունեցավ դասվար Աննա Հարությունյանը՝ ներկայացնելով երկրորդ կիսամյակում կատարած աշխատանքները: Յուրաքանչյուր ծնողի ներկայացվեց իր երեխայի առաջադիմությունը,տեղեկացան՝ թե ինչ թերացումներ կան աշակերտների մոտ և ինչ պետք է անեն ամառային արձակուրդներին,որպեսզի խնդիրները վերանան:Ամփոփվեց տարեկան գնահատականները :
Դասարանում սովորում են չորս գերազանց աշակերտ՝
Ավագյան Ավագ Մարտիկի
Ավագյան Լուսինե Գեղամի
Ավետիսյան Վիկա Սարգիսի
Թևոսյան Կարինա և տասնմեկ ուսման առաջավոր:

Որոշեցին.

Ամառային արձակուրդներին կատարել տրված հանձնարարությունները, լինել ուշադիր ձեռագրերի նկատմամբ, շատ ժամանակ տրամադրել ընթերցանությանը:

2. Լսեցին.- *Էքսկուրսիայի կազմակերպման հարցը:*

Դասվար Աննա Հարությունյանն առաջարկեց էքսկուրսիան կազմակերպել դեպի Ծաղկաձոր:

Որոշեցին.

Առաջարկը ընդունվեց բոլոր ծնողների կողմից: Կատարելով ծախսերի հաշվարկ՝ որոշեցին հավաքել 3500-ական դրամ զումար էքսկուրսիան լիարժեք կազմակերպելու համար: Այդ աշխատանքները հանձնարարվեց ծնողկոմիտեի անդամներին:

Ծնողական խորհրդի նախագահ՝ /Վարդանյան Լիլիթ/

Քարտուղար՝ / Ազատյան Տաթև /